



ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹԵԽԳ: ԻԹ. ՏԱՐԻ. ՀԱՄԱՐ ԵԱՍՆԵՐՄԷԿԵՐՈՐԳ

ԴՈՅԵՄԲԵՐ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՄԵՐ ՄԻՆԹԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԵՂՈՒԹԵԱՆ ՈՐԵՐՈՒՄ.

«Եթէ եւից ի դաշտ՝ ահա վերադարձիր, եւ
եթէ մտից ի քաղաք՝ ահա ցաւք սովոյ...
Միթէ խոտերով խոտերցնր զՅուդայ, կամ վերս-
նալով վերացան ահա Քո. ընդէր նարնր զմեզ,
եւ ոչ գոյ մեր բժշկութիւն. ակն կալաք խա-
ղաղութեան, եւ ոչ գոյր բարութիւն. ժամա-
նակի բժշկութեան՝ եւ ահա խոտութիւն:»

Երեմ. ԺԴ. 18-19:

Ում սիրտը չի կծկուում և աղիքը չեն
զալարուում, այս մի քանի տողերի մէջ,
հազարաւոր տարիներ առաջ, ահաւոր ճշգու-
թեամբ արձանագրուած գտնելով աղէտներին

այն բոլոր սարսափը, որին ենթակայ է այսօր
նոյն Յուդայի Եստուծոյ անունը խոստովա-
նող մի ուրիշ ժողովուրդ, հոգեկից իրեն և
արեւնառու: «Օղարթիր Երեմիաս», հառա-
չել են անշուշտ ի խորոց շատ հայեր այս չա-
բարաստիկ օրերում Վերթողահօր հեռ.
«ղարթիր և ողբա հանդերձ մարդարեւութեամբ,
որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառա-
նալոցս եմք», և մարդարեւ ողբակից է մեզ,
նորա հոգեշունչ խօսքերի մէջ տառապեալ
ժողովրդի դառն կակիճն այնպիսի հրաբորբոք
արտայայտութիւն է գտնում որպիսին տալ
չէր կարող ոչ մի ճարտար գրիչ. «Տէր, փրկեա՛
ղմեղ ի ժամանակի չարեաց, ընդէր եղեր իրբե.

զպանդուխտ յերկրի, կամ իրբն զբնակ երկրի, որ դառնայցէ յօթեանս: Մի՛թէ իցես իրբն զմարդ, որ ննջէ, կամ իրբն զայր, որ ոչ կարէ ապրեցուցանել, և Ղու ի միջի մեքում ես: Տէր, և անուն Քո կոչեցեալ է ի վերայ մեր, մի՛ մոռանար զմեզ: Ծանր, սրտաձմիրկ հարցեր, որոնք կարծես մեր հոգու խորքից են բղխում, մեր թշուառ հայրենիքի ամէն մի անկիւնում արձագանդ տալիս. ո՛ւր է արդեօք հայի Աստուածը, ինչո՞ւ հազարաւոր անմեղ զոհերի արիւնք չէ տեսնում, որոց և այրեաց ողբն ու աղաղակը չէ լսում: Ո՛ւր է Նորա արդարութիւնը, երբ ամբողջ մի ազգ վիրաւոր ընկած տքում է օրհասական տաղնապի մէջ, և ոչ ոք կայ, որ օգնութեան ձեռք կարկառէ. սպասում է բժշկութեան, բայց ահա նորանոր հարուածներ, սփոփանքի ակն ունի, բայց դուրս փոխարէն ծաղր ու անարգանք է լսում և սոսկալի անտարբերութեան հանդիպում: Ահ, ո՛ւր, ո՛ւր է Աստուած, մեր միակ ապաւէնը անձկութեան ժամին: մի՛թէ իսպառ մոռացաւ մեզ, մի՛թէ մեր մէջ չէ բնակուում: մի պանդուխտ էր, որ գնաց, մի օտարական, որ առ ժամանակ օթեանեց, և իւր փոյթը չէ մեր երկրի վիճակը, զուր ենք Նորա անունը մեր վերայ կրում, այդ անուան համար հալածուում՝ օգնել երբէք Նա չէ կարող:—Տէր, փրկեա՛ զմեզ ի ժամանակի շարեաց, կանչում ենք յուսահատ, և Յորի բարեկամների զուժեան ձայնն է մեզ մխիթար: Չեր մեղքերի պատիժը, ձեր չարութեան հատուցումն էք կրում: զղջացէք և ձեր դահիճների զթութեանն ապաւինեցէք: Ո՛հ անտանելի է այս. մեր արիւնք բորբոքում, կատաղի ելեւէջներ է անում, մեր ողջ ներքինը զայրանում, բողբոքում է այս անիրաւ պահանջի դէմ: նոյն ինքն ողբասաց մարգարէն դատախազ է մեր փոխարէն Ամենակալի աթոռի առաջ. «խրատեա՛ զմեզ, Տէր, բայց իրաւամբք և մի՛ ցամամբ...» Այժմէ մեղք մեր հակառակ կացին մեզ, Ղու Տէր, արա՛ վասն անուանդ Քո—և անկարելի է, որ Նա այժմ ևս մերժէ այդ արգար բարեխօսութիւնը,

ինչպէս մերժեց երբեմն: Խորայելի խստապարանոց ազգին. անկարելի է, որ քրիստոնեաների ամենողորմ Աստուածը չափազանց համարէ մի նահատակ ժողովրդի համար այն մխիթարութիւնն, իսկ, որ Ռաբելոնի զերեալներին տրուեցաւ. «Թողեա՛ լիցին դմա մեղք իւր, զի ընկալու է ձեռանէ, Տեառն կրկին զհատուցումն մեղաց իւրոց»:

Տէր, ո՞ հաւատաց լիոյ մերում և բազուկ Տեառն ո՛ւմ յայտնեցաւ... Այր մի ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց, զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ, և ոչ ինչ համարեցաւ... Իբրեւ ոչխար ի սպանդ վարեցաւ, իրբն որոջ առաջի կտրչի անմոռնչ կայ՝ այնպէս ոչ բանայ զբերան իւր...—Առաջին անգամ չէ, որ քարասիրտ մարդիկ փշեայ պսակ են ոլորում մի նահատակի գլխի շուրջ, առաջին անգամ չէ, որ անմեղ արիւն է թափուում և մինչև երկինք հասնող հեծութեան աղաղակները աշխարհի վերայ անլսելի են մընում: կենդանի է սակայն Նա, որ Իւր նահատակ Ողբու ձեռքով ողջ մարդկութիւնը փրկել հաճեցաւ, որ տանջանքի և նեղութեան մէջ գիտէ կրթել Իւր ընտրեալներին, որի առաջ ոչ մի կաթիլ անմեղ արիւն զուր չէ ընկնում, մկրտում, մաքրում, ազնիւ և սիրելի է դարձնում անհատն ու ամբողջ ազգութիւններ՝ այսպիսով միայն հաճոյ և Իրեն: Նա, որ դաշտի մէջ ցրուած չոր ոսկորներին կենդանութեան շունչ փչել, իւր հզօր բազուկն առնապատի վերայով մեկնել, նոցա կրկին միատեղ ժողովել, նոր ազգ կազմել, նոր տուն հաստատել կարող էր՝ Նա այսօր ևս խնամող հայր է Նոր Սիոնի կարթաղոտոր որդւոց համար, նախանձախնդիր Տէր իւր տան փառքին: Անյուսութեան այս անապատի մէջ Նորա ստեղծադործ և մխիթարիչ ձայնն է ահա՛ որ հնչում է անդադար ջերմեռանդ հաւատացեալի ականջին, խրախոյս և յոյս ներշնչում: Ամենայն ձորք լցցին, և ամեայն լերինք և բլուրք, խոնարհեցցին, և եղիցին ամենայն զբոռարինք ի զիւրինս, և առապարքն ի դաշտս: Եւ երևեսցին փառք Տեառն, և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ, լի Տէր խօսեցաւ, ամէն: